


ՍԻՐԵԼԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՇԱՐՔԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑԻՍ

Posted on April 20, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



23 Ապրիլ 2018

Սիրելի Դաշնակցական Շարքային Հայրենակից,

Տեղեակ եմ. կը հետեւիս Երեւանեան լուրերուն: Սերժ Սարգսյանը հրաժարեցաւ եւ դաւշեայ յեղափոխութիւնը արձանագրեց առաջին լուրջ յաղթանակը ժողովրդաւար ազատ տնտեսապէս արդար բաշխման համակարգ հաստատելու ընթացքին մէջ:

Յոյժ կարելոր են յառաջիկայ օրերը իրականացնելու համար մեր հայաստանաբնակ եղբայներու ջախջախիչ մեծամասնութեան քաղաքական, տնտեսական, կենցաղային ու բնապաշտպանութեան հետ աղերս ունեցող անժամանցելի իղծերն ու պահանջքները:

Դուն, որպէս սփիւռքահայ դաշնակցական շարքային այս պատմական օրերուն ի՞նչ որոշումի պիտի հանգիս: Պիտի շարունակե՞ս ենթարկուիլ անամօթաբար գող ու աւազակ սակաւապետներու հետ գործարք սարքած ՀՅԴ Երեւանեան կեդրոնական Կոմիտէի, Պյուրոյի քեզի պարտադրուած հրահանքներուն: Պիտի ունենա՞ս քաջութիւնը ընդմիշտ մեկդի շարտելու անոնց սփիւռքահայ մանկլաւիկները որոնք կը ներկայանան իբր հայ ժողովուրդի ներկայացուցիչներ:

Ընտրութիւնը քուկդ է: Մի՛ ընկրկիր: Մասնակից եղիր հայրենիքի իսկական ժողովրդական համակարգ կերտելու գործին:

Ընկերաբար,

Տիգրան Աբրահամեան

